# ՀԵԳԵՐԷ՛Ն



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1881

# ՍԱՂՄՈՍ

ՈՐ Է

## ՀԵԳԵՐԷՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1881

A 7508



Նորաբողբոջ Մանուկ տղայ ,
Ուսիր հեգել գիր Հայկայ .
Մատնիր սիրով Հոգւով ցնծամ ,
Արթուն մտօք ուղիղ կարդամ ։

# ՍԱՂՄՈՍ ԴԱՒԹԻ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ե րա նե ալ է այր, որ ոչ գը-
նաց 'ի խոր հուր դըս ամ պա-
րըշ տաց. 'ի ճա նա պար հի մե ղա-
ւո րաց նա ոչ ե կաց, եւ յա թո-
ռըս ժան տից նա ոչ նըս տաւ ։
Այլ յօ րէ նըս տե առն են կամք
նո րա, եւ յօ րէ նըս նո րա խոր-
հես ցի նա 'ի տը ւէ եւ 'ի գի շե-
րի. եւ ե ղի ցի նա որ պէս ծառ,
որ տըն կեալ է 'ի գը նա ցըս
ջու րըց ։
Որ ըզ պըտ ուղ իւր 'ի ժա մու
նա ցէ, եւ տե րեւ նո րա մի

Թափեսցի, եւ զամենայն զոր ինչ արասցէ, յաջողեսցի նմա։

Ոչ այսպէս են ամպարիշտք, եւ ոչ այնպէս. այլ որպէս ընդ փոշի՝ զոր հոսէ հողմ ՚ի վերայ երեսաց երկրի։

Վասն այսորիկ ոչ յարիցեն ամպարիշտք ՚ի դատաստան, եւ ոչ մեղաւորք ՚ի խորհուրդս արդարոց։

Քանզի ճանաչէ Տէր զճանապարհս արդարոց. ճանապարհք ամպարշտաց կորիցեն։

Սաղմոս ՚ի Դաւիթ Բ.

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, եւ ժողովուրդք խորհեցան ՚ի սնոտիս։

Յանդիման է զէն թագաւորք երկրի, եւ իշխանք ժողովեցան

'ի մի ա սին վասն տե առն եւ վասն
օ ծե լոյ նո րա ։
Խըզ ես ցու.ք ըզ կա պա նըս նո ցա,
եւ ըն կես ցու.ք 'ի մէնջ ըզ լուծ
նո ցա ։
Բը նա կեալն յերկինս ծի ծա ղես-
ցի ըզ նո.քօք, եւ տէր ար հա-
մար հես ցէ ըզ նո սա ։
Յայն ժամ խօ սես ցի ընդ նո սա
բար կու թեամբ իւ րով, եւ
սըրտ մը տու թեամբ իւ րով խը-
ռո վե ցու ս ցէ ըզ նո սա ։
Ես կա ցի թա գա ւոր 'ի նը մա նէ.
'ի վե րայ լե րին սի օ նի սըր բոյ
նո րա, 'ի պատ մել ըզ հը րա-
մա նս տեառն ։
Տէր ա սաց ցիս որ դի իմ ես դու,
եւ ես այ սօր ծը նայ ըզ .քեզ ։
Խընդ րեա 'ի նէն եւ տաց .քեզ
ըզ հե թա նոս 'ի ժա ռանգ ու-

թիւն, եւ իշխանութիւն քեզ
ընդ ամենայն ծագըս երկրի։
Հովուեսցես ըզնոսա գաւազա-
նաւ երկաթեաւ, եւ որպէս
զանօթ բըրտի փըշրեսցես ըզ-
նոսա։

Արդ, թագաւորք, զայս 'ի միտ
առէք, խըրատեցարուք ամե-
նեքեան, որք դատիք զերկիր։
Ծառայեցէք տեառն երկիւ-
ղիւ, եւ ցընծացէք առաջի նո-
րա դողութեամբ։
Ընկալարուք ըզխըրատ նորա
զի մի՛ բարկասցի տէր, եւ կո-
րընչիցիք 'ի ճանապարհացն ար-
դարութեան։
Ի ժամանակի որ պէս բորբո-
քեսցի բարկութիւն նորա։
Երանի ամենեցուն, որք յու-
սացեալ են 'ի տէր։

Սաղմոս ՚ի Դաւիթ Գ.

Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք
իմ, եւ բազումք յարեան ՚ի վե֊
րայ իմ։
Բազումք ասէին զանձնէ իմմէ,
թէ չիք փրկութիւն սորա առ
աստուած իւր։
Այլ՝ դու տէր, օգնական իմ
ես, փառք իմ եւ բարձրացու֊
ցիչ գլխոյ իմոյ։
Ձայնիւ իմով ես առ տէր կար֊
դացի, լուաւ ինձ ՚ի լեռնէ սըր֊
բոյ իւրմէ։
Ես ննջեցի եւ ՚ի քուն եղէ.
զարթեայ եւ տէր ընդունելի
իմ է։
Ոչ երկեայց ես ՚ի բիւրուց զօ֊
րաց նոցա, որ շուրջանակի պա֊
տեալ պաշարեալ պահէին զիս։

Արի տէր, եւ փրկեա զիս Աստուած իմ, զի դու հարեր զամենեսեան, որք էին ընդ իս թըշնամութեամբ ՚ի տարապարտուց. եւ զատամունս մեղաւորաց փըշրեցեր։ Տէառն ըրդ է փրկութիւն, ՚ի վերայ ժողովրդեան քոյ օրհնութիւն քո։

Սաղմոս ՚ի Դաւիթ Դ.

Ի կարդալ իմում լուար ինձ աստուած ըստ արդարութեան. ՚ի նեղութենէ ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ եւ լուր աղօթից իմոց։ Որդի՛ք մարդկան. մինչեւ յե՞րբ էք խըստասիրտք. ընդէ՞ր սիրէք ըզնանդութիւն եւ խընդ-

րէք ըղ որ տու թիւն ։

Ծա նե րուք , զի ըս քան չէ լիս ա-
բար տէր սըր բոյ իւ րում . եւ
տէր ըո ւի ցէ ինձ 'ի կար դալ ի-
մում առ նա ։

Բար կա նայք եւ մի մե ղան չէք .
զոր ինչ ա սէք 'ի սիր տըս ձեր ,
յան կո զի նըս ձեր զըղ ջա ցա-
րուք ։

Մա տու ցէք պա տա րագ ար դա-
րու թեան , եւ յու սա ցա րուք
'ի տէր ։

Բա զումք ա սէ ին թէ՝ ո՛ ցու ցցէ
մեզ ըղ բա րու թիւն տե առն .
Նը շա նե ցաւ առ մեզ լոյս երե-
սաց քոց , եւ ե տուր ու րա խու-
թիւն սըր տից մե րոց ։

Ի պըտ ղոյ ցո րե նոյ գի նւոյ եւ
ձի թոյ իւ րեանց լը ցու ցեր ըղ-
նո սա ։

Ի խա ղա ղու թեամբ յայս եւ 'ի սոյն նըն ջես ցուք եւ զար թի-ցուք. զի դու տէր մի այն ա ռան-ձին յու սով քով բը նա կե ցու-ցեր ըզ մեզ:

Սաղմոս 'ի Դաւիթ Ե.

Բանից ի մոց ուն կըն դիր, տէր, եւ 'ի միտ առ զա ղա ղակ իմ: Նայ եա 'ի ձայն ա ղօ թից ի մոց Թա գա ւոր իմ եւ աս տուած իմ: Ես ըզ քեզ ա ղա չեմ, տէր, ընդ ա ռա ւօ տըս լու իցես ձայնի ի-մում. ընդ ա ռա ւօ տըս պատ-րաստ եղէց յանդիման լինել առ-քեզ:

Ոչ թէ, դու աս տուած կա մի զա նօ րէ նու թիւն, եւ ոչ բը-նա կեն առ քեզ չարք. եւ անօ-րէնք մի՛ բը նա կես ցեն ա ռա ջի

աչաց քոց ։
Ատեցեր զայնոսիկ ոյք գործեն
զանօրէնութիւն · կորուսա֊
նես զամենեսեան, ոյք խօսին
ըզսուտ ։
Զայր արիւնահեղ եւ ըզնեն֊
գաւոր պիղծ առնես դու, տէր ·
այլ ես ըստ բազում ողորմու֊
թեան քում մըտից 'ի տուն քո,
երկիրպագից 'ի տաճար սուրբ
քո երկիւղիւ քո ։
Տէր, առաջնորդեա ինձ յարդա֊
րութեան քում · վասըն թըշ֊
նամեաց իմոց ուղիղ արա առա֊
ջի իմ ըզճանապարհըս քո ։
Ոչ գոյ 'ի բերանըս նոցա ճըշ֊
մարտութիւն, եւ սիրտք նո֊
ցա նանըրեալք են ։
Որպէս գերեզման բաց են կո֊
կորդք նոցա, եւ լեզուօք իւ֊

րեանց նենգաւորք էին ։

Դատեա ըզնոսա աստուած զի անկցին 'ի խորհրդոց իւրեանց. ըստ բազում ամպարշտութեան նոցա մերժեա ըզնոսա զի դառնացուցին ըզքեզ ։

Եւ ուրախ լիցին ամենեքեան, որ յուսացեալ են 'ի քեզ. յաւիտեան ցընծասցեն, եւ բընակեսցիս դու 'ի նոսա ։

Պարծեսցին 'ի քեզ սիրելիք անուան քո, զի օրհնեսցես դու զարդարն, տէր, որպէս զինու հաճութեամբ քով պըսակեցեր ըզնոսա ։

Սաղմոս 'ի Դաւիթ Զ.

Տէր, մի սըրտմըտութեամբ քով յանդիմաներ զիս, եւ մի բարկութեամբ քով խըրատեր զիս ։

Ողորմեա ինձ, տէր, զի հիւանդ
եմ ես. բըժըշկեա զանձըն իմ,
զի խըռովեցան ոսկերք իմ։
Անձըն իմ յոյժ խըռովեցաւ,
և դու տէր, մինչև յե՞րբ։
Դարձ տէր, և փըրկեա զանձըն
իմ. կեցո զիս տէր, ըստ ողոր-
մութեան քում։
Զի ոչ ոք է, որ 'ի մահու յիշէ
ըզքեզ, կամ 'ի դըժոխըս խոս-
տովան առնիցի առ քեզ։
Վաստակեցայ ես 'ի հեծու-
թեան իմում. լուացի զամե-
նայն գիշեր ըզմահիճըս իմ,
և արտասուօք իմովք զանկո-
ղինըս իմ թացի։
Խըռովեցաւ 'ի սըրտմըտութե-
նէ ակն իմ, մաշեցայ ես 'ի վե-
րայ ամենայն թըշնամեաց ի-
մոց։

Ի բաց կա ցէք յի նէ՛ն ա մե նե-
քեա՛ն, ո՛ր.ք գո՛ր ծէ.ք զա նօ րէ-
նու թիւ՛ն ։

Լո ւաւ տէր ձա՛յ նի լա լոյ ի մոյ,
լո ւաւ տէր ա ղօ թից ի մոց. եւ
տէր ըղ խըն դը րուա ծըս իմ ըն-
կա լաւ ։

Ա մա չես ցե՛ն եւ խըռ ով վես ցին
յոյժ ա մե նայն թըշ նա միք իմ.
դա՛ր ձ ցի՛ն յե տս եւ ա մա չես ցեն
յոյժ վաղ վա ղա կի եւ խըռ ով-
վես ցին ։

Սաղմոս ՚ի Դաւիթ Է.

Տէր աս տուած իմ ՚ի քեզ յու-
սա ցայ, փըր կեա զիս, յա մե նայն
հա լած չաց ի մոց ապ րեա ցո զիս։
Գու ցէ եր բէ.ք յա փըշ տա կի ցէ
որ պէս առ իւծ զա՛ն ձը՛ն իմ. ոչ ո.ք

լի ցէ , որ փըր կի ցէ , եւ ոչ այն ,
որ ապ րե ցու ցա՛նի ցէ ։
Տէր աս տու ած իմ , թէ ա րա րի
զայս , եւ թէ ի ցե՛ն ա՛նօ րէ՛նու֊
թիւ՛նք 'ի ձեռս իմ ։
Թէ հա տու ցի եր բէք այ՛նո ցիկ ,
ոյք հա տու ցի՛ն ի՛նձ չար , ան֊
կեայց եւ ես 'ի թըշ՛նա մեաց
ի մոց ըն դու՛նայն ։
Հա լա ծես ցէ ա պա թըշ՛նա մի՛ն
զա՛նձն իմ , հաս ցէ , կո խես ցէ
յեր կիր ըզ կե ա՛նըս իմ , եւ ըզ
փա ռըս իմ 'ի հող բը՛նա կե ցուս֊
ցէ ։
Ա րի՛ Տէր բար կու թեամբ քով ,
եւ բարձր լեր 'ի ըս պա ռիլ թըշ֊
՛նա մեաց ի մոց ։
Զար թիր Տէր աս տու ած իմ 'ի
հըր ա մա՛նս քո՝ զոր պա տու իր֊
րե ցեր , եւ ժո ղովք ժո ղո վըր֊

դոյ շուրջ եղելոյն ընդ քեւ ։
Վասն այ սո րիկ 'ի բաց ձու նըս
դարձ տէր. եւ տէր դա տի ընդ-
ժո ղո վուր դըս իւր ։

Դատ ա րա ինձ տէր՝ ըստ ար դա-
րու թե ան ի մում, ըստ ան բը-
ծու թե ան ի մում, որ յիս ։

Կա տա րես ցին չա րիք 'ի մե րայ
մե ղա ւո րաց, եւ յա ջո ղես ցես
զու ար դա րոյ ։

Որ քըն նէ ըզ սիր տըս եւ զե րի-
կա մու նըս աս տուած ար դար.
յի րա ւի է օգ նու թիւն ինձ յաս-
տու ծոյ, որ ապ րե ցու ցա նէ-
զայ նո սիկ՝ ոյք ու ղիղ են սըր-
տիւք ։

Աս տուած դա տա ւոր ար դար՝
հըզօր եւ եր կայ նա միտ. որ ոչ
ա ծէ ըզ բար կու թիւն իւր զօր-
հա նա պազ ։

Ապա թէ ոչ դառնայք առ նա,
ըզսուր իւր սըրեալ է եւ զա-
ղեղըն իւր լարեալ, եւ 'ի նը-
մա պատրաստեալ է զանօթըս
մահու, եւ ըզնետս իւր այ-
րեցեալս է գործեալ։

Ահաւասիկ երկնեաց զանօրէ-
նութիւն. յղացաւ ըզցաւըս,
եւ ծընաւ զանիրաւութիւն։

Գուբըն, զոր փորեաց եւ պե-
ղեաց, 'ի նոյն անկցի 'ի խորխո-
րատ, զոր եւ գործեաց։

Դարձցին ցաւք 'ի գըլուխ նո-
րա, 'ի վերայ գագաթան նորա
անօրէնութիւնք իւր իջցեն։

Խոստովան եղէց տեառն ըստ
արդարութեան նորա, սաղ-
մոս ասացից անուան տեառն
բարձրելոյ։

Սաղմոս ՚ի Դաւիթ Ը.

Տէր տէր մեր, զի՜ ըսքան չե լի է
ա՛ նուն քո ՚ի վե րայ ա մե նայն
երկ րի։
Համ բար ձաւ մեծ վա յել չու-
թիւն քո ՚ի վե րոյ քան զեր կի-
նըս. ՚ի բե րա նոյ ման կանց տը-
ղա յոց եւ ըս տըն դեայց հաս-
տա տե ցեր զօրհ նու թիւն։
Վա սն թըշ նա մեայ քոյ տէր,
զի եղծ ցի թըշ նա մին եւ հա-
կա ռա կոր դըն։
Տե սից յեր կի նըս՝ ըզ գոր ծըս
մա տանց քոց, ըզ լու սին եւ
զաս տե ղըս՝ զոր ըս դու հաս տա-
տե ցեր։
Ո՞վ է մարդ, զի յի շես դու ըզ-
նա. կամ որ դի մար դոյ՝ թէ այց
ինչ ա րաս ցես դու նը մա։

Փո՜քր ինչ խո նարհ ա րա րեր ըզ-
նա քան ըզ հը րեշ տա կըս քո •
փա ռօք եւ պա տուովք պը սա-
կե ցեր ըզ նա • եւ կա ցու ցեր
ըզ նա 'ի վե րայ ա մե նայն ձե-
ռա կեր տաց քոց :

Զա մե նայն ինչ հը նա զանդ ա րա-
րեր 'ի ներ քոյ ո տից նո րա , ըզ-
խա շըն եւ զար ջառ՝ եւ զա մե-
նայն ինչ :

Եւս եւ զե րէ վայ րի , ըզ թըռ-
չու նըս եր կը նից , ըզ ձը կու նըս
ծո վուց , որ շըր ջին ընդ շա ւի-
ղըս ծո վուց :

Տէր տէր մեր , զի՞ ըս քան չե լի է
ա նուն քո 'ի վե րայ ա մե նայն
եր կը րի :

Սաղմոս ՚ի Դաւիթ Թ.

Գոհացայց ըզքէն, տէր, բոլը-
րով սըրտիւ իմով, պատմեցից
զամենայն ըսքանչելիս քո :
Ուրախ եղէց եւ ցընծացայց
՚ի քեզ. սաղմոս ասացից ա-
նուան տեառ նըդ բարձրելոյ :
Ի դառնալ յետըս թըշնամեաց
իմոց, որ կարասցին եւ կորի-
ցեն յերեսաց քոց :
Արարեր ըզդատաստանըս իմ
եւ զիրաւունըս. նըստար յա-
թոռ դատաւոր արդարու-
թեան :
Սաստեցեր ՚ի հեթանոսըս, եւ
կորեաւ ամպարիշտըն. զա-
նուանըս նոցա ջընջեցեր յա-
ւիտեանըս յաւիտենից. եւ
թըշնամոյն զէն պակասեալ

մինչ իս պառ ։

Ըզ քա ղա քըս ա ւե րե ցեր , եւ
կո րե աւ յի շա տակ նո ցա ա ղա-
ղա կաւ ։

Աս տու ած կայ եւ մը նայ յա ւի-
տե ան պատ րաստ ա րար զա-
թոռ իւր 'ի դա տաս տա նի ։

Ին քըն դա տի զաշ խարհ ար դա-
րու թե ամբ , եւ ըզ ժո ղո վուրդ
իւր ուղ ղու թե ամբ ։

Ե ղեւ տէր ա պա ւէն տը նան կի,
օգ նա կան 'ի նե ղու թե ան՝ 'ի
դէպ ժա մա նա կի ։

Յու սաս ցին 'ի քեզ ա մե նե քե ան,
որք գի տեն զա նուն քո . զի ոչ
թող ցես զայ նո սիկ՝ որ խըն դ-
րեն ըզ քեզ տէր ։

Սաղ մոս ա սա ցէք տե առն , որ
բը նա կե ալն է 'ի սի ոն . պատ-
մե ցէք 'ի հե թա նո սըս ըզ գոր-

ծըս նո րա ։

Ի խըն՛դ րել զա րի՛ւն նո ցա՝ յի-
շե աց ․ եւ ոչ մո ռա ցաւ տէր
զա ղօ թըս տը նա՛ն կաց ։
Ո ղոր մեաց ին՛ձ տէր՝ եւ տես
ըզ խո նար հու թի՛ւն իմ՛ 'ի թըշ-
նա մեաց ի մոց ․ ո՛ բար ձըր ա րա-
րեր զիս 'ի դը րա՛նց մա հու ։
Որ պէս պատ մե ցից զա մե նայն
օրհ նու թիւ նըս քո 'ի դը րու-
նըս դըս տեր սի ով՛նի ․ եւ ցըն-
ծա ցայց 'ի փըր կու թե ա՛ն քում ։
Ըն կը լա՛ն հե թա նոսք յա պա կա-
նու թե ա՛ն իւր ե ա՛նց՝ զոր ա րա-
րին ․ որ ո գայթ՝ զոր թա քու ցի՛ն՝
առ ցէ զո տըս նո ցա ։
Ճա նա չի տէր յառ նել ըզ դա-
տաս տա նըս իւր ․ եւ 'ի գոր ծըս
ձե ռաց իւր ե ա՛նց կա պե ցին
մե ղա ւորք ։

Դարձցին մե ղաւորք անդ րէն 'ի
դըժոխըս. եւ ամենայն հեթա-
նոսք որ մոռա ցան զաստուած:

Ոչ իս պառ մոռանայ տէր զաղ-
քատըն. համբերութեան աղ-
նան կայ մի կորիցէ իս պառ:

Արի տէր՝ եւ մի զօրասցի մարդ-
դատեսցին հեթանոսք առա-
ջի .քո:

Կացո տէր օրէնըսդիր 'ի վերայ
նոցա, եւ ծանիցեն հեթանոսք
թէ մարդիկ են:

Ընդէր տէր կացեր 'ի հեռա-
տանէ, անտես արարեր 'ի դէպ
նեղութեան ժամանակի.

Յամբարտաւանել ամպարըշ-
տին՝ այրի աղքատըն. որ դեղ-
ցին 'ի խորհուրդըս իւրեանց,
զոր եւ խորհեցան:

Զի գովի մեղաւորըն 'ի ցանկու-

թիւն ան ձին իւ րոյ. որ զըր կէն,
եւ նա գո վի։

Իսկ ըն դէ՞ր բար կա ցոյց մե ղա-
ւո րըն զաս տու ած՝ ըստ բա ղում
բար կու թեան իւ րում՝ թէ ոչ
խըն դը րի։

Ոչ է աս տու ած ա ռա ջի ա չաց
նո րա. պղծ են ճա նա պարհք
նո րա յա մե նայն ժամ։

Բար ձե ալ են ի րա ւունք յե րե-
սաց նո րա. 'ի վե րայ ա մե նայն
թըշ նա մեաց իւ րոց տի րես ցէ։

Ա սաց 'ի սըր տի իւ րում թէ ոչ
սա սա նե ցայց ազ գէ յազգ ա-
ռանց չա րի։

Ա նի ծիւք եւ դառ նու թեամբ
եւ նեն գու թեամբ լի է բե րան
նո րա, եւ 'ի ներ քոյ լե զու ի նո-
րա ցաւք եւ վաս տակք։

Նըս տի դա րա նե ալ ընդ մե ծա-

մե ծըս 'ի գաղտ նիս՝ ըս պա նա֊
նել զամ բի ծըն ։

Աչ.ք նո րա 'ի տը նան կըս հային.
դա րա նի 'ի գաղտ նիս, որ պէս ա֊
ռիւծ 'ի մօր ւոջ իւ րում ։

Դա րա նի յա փըշ տա կել զաղ.քա֊
տըն, յա փըշ տա կել զաղ.քա տըն
եւ ձը գել ըղ նա ։

Յոր ո գայթ իւր խո նար հե ցու֊
ցէ ըղ նա. խո նար հես ցի եւ
անկ ցի 'ի տի րել իւ րում 'ի վե֊
րայ տը նան կաց ։

Զի ա սաց 'ի սըր տի իւ րում՝
թէ մո ռա ցաւ աս տուած. դար֊
ձոյց զե րե սըս իւր զի մի՛ տես ցէ
իս պառ ։

Ա րի՛ տէր աս տուած իմ, բար֊
ձըր ե ղի ցի ձե ռըն .քո, եւ մի՛
մո ռա նար ըզ տը նան կըս ։

Իսկ ընդ է՞ր բար կա ցոյց ամ պա֊

րիշտըն զաստուած. զի ասաց 'ի
սրտի իւրում թէ ոչ քննի։
Տեսանես դու ըղնա 'ի ցաւըս,
եւ 'ի սըրտմըտութիւնըս հա-
յիս. 'ի քեզ թողեալ է աղքա-
տըն, և որբոյն դու ես օգնական։
Խորտակեսցի բազուկ մեղաւո-
րի եւ չարի. խընդրեսցին մեղք
նորա, եւ նա մի՛ գըտցի։
Տէր թագաւոր յաւիտեանս
յաւիտենից. կորիցեն հեթա-
նոսք յերկրէ նորա։
Ըղձանկութիւն տընանկաց
լուաւ Տէր, 'ի պատրաստու-
թիւն սրտից նոցա հայեցաւ
ականջք քո։
Դատ առնել որբոյն եւ տընան-
կի, զի մի՛ եւս յաւելցի մարդ
'ի մեծաբանել իւրում 'ի վերայ
երեսաց երկրի։

## Սաղմոս ի Դաւիթ Ժ.

Ի տէր յուսացայ. ո՞րպէս ասիցէք ցանձն իմ, փոփոխեաց 'ի լերինս որպէս ճնճղուկ։

Զի ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց. պատրաստ արարին զնետս 'ի կապարճս, ձգել ընդ խաւար այնոցիկ՝ ոյք ուղիղ են սրտիւք։

Զի զոր դու շինեցեր, նոքա աւերեցին. իսկ արդարն զի՞ արար։

Տէր 'ի տաճար սուրբ իւրում. տէր յերկինս յաթոռ իւրում։

Աչք նորա 'ի տնանկս հային, եւ արտեւանունք նորա քննեն զորդիս մարդկան։

Տէր քննէ զարդարն եւ զամբարիշտն. որ սիրէ զմեղս,

ա տէ զան ձըն իւր ։

Տե ղաս ցի ՚ի վե րայ մե ղա ւո րաց
ո րո գայթ՝ հուր եւ ծը ծումբ ,
այս մըր րիկ բա ժին բա ժա կի
նո ցա ։

Ար դար է տէր՝ եւ զար դա րու֊
թիւն սի րէ ․ զուղ ղու թիւն
տե սա նեն ե րեսք նո րա ։

Սաղմոս ՚ի Դաւիթ ԺԱ․

Ապ րե ցո զիս տէր , զի նո ւա֊
զե աց սուրբ ․ նո ւա զե ցան ճըշ֊
մար տու թիւնք յորդ ւոց ՚ի
մարդ կա նէ ։

Ի նա նիր խօ սե ցաւ այր ընդ ըն֊
կե րի իւ րում ․ շըր թամբք նեն֊
գա ւո րօք սիրտ ՚ի սիրտ խօ֊
սե ցաւ ։

Սա տա կէ տէր զա մե նայն շըր֊
թունս նեն գա ւո րըս , եւ ըզ֊

լեզուս մեծաբանըս ։
Ոյք ասացին՝ ըզլեզուս մեր
մեծըս արասցուք • շըրթունք
մեր առ մեզ են, եւ արդ մեր ո՞վ
է տէր ։

Վասն տառապանաց աղքատի
եւ հեծութեան տըննանկի,
այժմ յարեայց ասէ տէր • ե-
դից ըզփըրկութիւն իմ, եւ
համարձակեցայց ՚ի նոսա ։

Բանք տեառն են բանք սուրբ,
որպէս զարծաթ ընտրեալ եւ
փորձեալ յերկրէ • սըրբեալ եւ
պարզեալ եօթնպատիկ ՚ի հո-
ղոյ ։

Դու, տէր, պահեսցես ըզմեզ,
եւ ապրեսցուցես ըզմեզ յազ-
գէ յայսմանէ մինչեւ յաւի-
տեան ։

Շուրջ զանակի ամպարըշտք շըր-

ջին. ըստ բարձրու թեան քում
մե ծըս ա րաս ցես գու զոր դիս
մարդկան։

### Սաղմոս ՚ի Դաւիթ ԺԲ.

Մին չեւ յե՞րբ, տէր, մո ռա նաս
զիս իս պառ, մին չեւ յե՞րբ դար-
ձու ցա նես զե րե սըս քո յի նէն։
Մին չեւ յե՞րբ դը նեմ ըղ խոր-
հուր դըս յան ձըն իմ, եւ ցաւք
սըր տի ի մոյ զա ւու րըս։
Մին չեւ ցե՞րբ բար ձրա նայ թըշ-
նա մին ՚ի վե րայ իմ, նա յեա եւ
լուր ինձ տէր աս տուած իմ։
Լոյս տուր ա չաց ի մոց, զի
մի եր բէք նըն ջե ցից ՚ի մահ։
Մի ա սաս ցէ թըշ նա մին՝ թէ
յաղ թե ցի նը մա. կամ նե ըն չեք
իմ ցըն ծաս ցեն, թէ ես սա սա-
նե ցայց։

Ես յողորմութիւնըս քո, տէր,
յուսացայ, ցընծացաւ սիրտ իմ
'ի փըրկութեան քում. օրհնե-
ցից ըզ տէր ըզ բարերարըդ իմ:

Սաղմոս 'ի Դաւիթ ԺԳ.

Ասաց անըզգամըն 'ի սըրտի իւ-
րում, թէ ո՛չ գոյ աստուած:
Ապականեցան եւ պըղծեցան
յանօրէնութեան իւրեանց.
եւ ոչ ոք է՝ որ առնէ ըզքաղց-
րութիւն:
Տէր յերկնից նայեցաւ յամե-
նայն որդիս մարդկան, տեսա-
նել թէ իցէ՞ ոք իմաստուն՝ որ
խընդրիցէ զաստուած:
Ամենեքեան խոտորեցան 'ի
միասին՝ եւ անպիտանացան:
Ո՛չ ոք է՝ որ առնէ ըզքաղցրու-
թիւն, եւ չէ ոք մինչեւ 'ի մի:

Որ պէս ոչ ծա նի ցեն ա մե նե֊
քեան, ոյք գոր ծեն զա նօ րէ֊
նու թիւն ։

Ոյք ու տէ ին ըզ ժո ղո վուրդ իմ,
որ պէս կե րա կուր հա ցի, եւ
առ տէր ոչ կար դա ցին ։

Անդ եր կի ցեն զեր կիւղ՝ ուր ոչ
ի ցէ եր կիւղ. զի տէր է յազ գըս֊
ար դա րոց ։

Ըզ խոր հուրդ աղ քա տին յա֊
մօթ ա րա րիք, զի տէր է յոյս
նո րա ։

Ո՛ տա ցէ 'ի սի օ նէ ըզ փըր կու֊
թիւն իս րա յէ լի. 'ի դար ձու ցա֊
նել տեառն ըզ գե րու թիւն ժո֊
ղո վըր դեան իւ րոյ. ցըն ծաս ցէ
յա կոբ՝ եւ ու րախ ե ղի ցի իս
րա յէլ ։

### Սաղմոս ՚ի Դաւիթ ԺԴ.

Տէր, ո՞վ կայցէ ՚ի խորանի քում, կամ ո՞վ բնակեսցի ՚ի լեառն սուրբ քո։

Որ գնայ անբիծ, գործէ զարդարութիւն, եւ խօսի ըզճշմարտութիւն ՚ի սրտի իւրում։

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով, եւ չար ընկերի իւրում ոչ արար։

Նախատինս ՚ի մերձաւորաց նա ոչ առնու. արհամարհեալ է առաջի նորա չարագործն։

Զերկիւղածս տեառն փառաւոր առնէ. որ երդնու ընկերի իւրում՝ եւ ոչ ստէ։

Զարծաթ իւր ՚ի վաշխ ոչ տայ, եւ կաշառս ՚ի վերայ իրաւանց ոչ առնու. որ զայս

ա րաս ցէ, նա մի սա սա նես ցի
յա ւի տեան :

Սաղմոս 'ի Դաւիթ ԺԵ.

Պա հեա զիս աս տու ած իմ, զի
ես 'ի քեզ յու սա ցայ . ա սա ցի
տեա ռըն, տէր իմ ես դու, եւ
բա րիք իմ ինձ 'ի քէն էն :
Սըր բոց քոց՝ որ.ք են յեր կրի
քում. ըն քան չե լի ա րա րեր զա
մե նայն կա մըս իմ 'ի նո սա :
Յա ճա խե ցին հի ւան դու թիւնք
նո ցա . յե տ այ սո րիկ ա պա վաղ
վա ղես ցին :
Ոչ ժո ղո վե ցայց 'ի ժո ղո վըս նո
ցա յա րեանց, եւ ոչ յի շե ցից
զա նուա նըս նո ցա 'ի շըր թու
նըս իմ :
Տէր բա ժին ժա ռան գու թեան
իմոյ, եւ բա ժա կի իմոյ դու ես՝

որ այսրէն դարձուցանես ըզ-
ժառանգութիւն իմ յիս։
Վիճակք ելին ինձ ընդ ընտիրըս,
եւ ժառանգութիւն իմ հաճոյ
եղեւ ինձ։
Օրհնեցից զՏէր՝ որ իմաս-
տուն արար զիս, մինչ 'ի գիշե-
րի եւս խըրատեցին զիս երի-
կամունք իմ։
Յառաջագոյն տեսանէի զՏէր
առաջի իմ յամենայն ժամ, զի
է ընդ աջմէ իմ մէ՝ զի մի սա-
սանեցայց։
Վասն այսորիկ ուրախ եղեւ
սիրտ իմ, եւ ցընծացաւ լեզու
իմ, եւս եւ մարմին իմ բընա-
կեսցի յուսով։
Զի ոչ թողցես զանձըն իմ 'ի
դըժոխըս, եւ ոչ տացես սըր-
բոյ քում տեսանել զապական-

նութիւն։

Ցուցեր ինձ զճանապարհս քո կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց ՚ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քո մինչ ի սպառ։

Սաղմոս ՚Ի Դաւիթ ԺԶ.

Լուր տէր արդարութեան եւ նայեա ՚ի խնդրուածս իմ. ունկն դիր աղօթից իմոց՝ զի ոչ շրթամբք նենգաւորօք։

Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն, եւ աչք իմ տեսցեն զուղղութիւն։

Փորձեցեր զսիրտ իմ, եւ քննեցեր ՚ի գիշերի. փորձեցեր զիս՝ եւ ոչ գտաւ յիս անիրաւութիւն։

Մի խօսեսցի բերան իմ զգոր-

ծըս որդ ւոյ մարդ կան. վա սըն
բա նից չըր թանց.քոյ՝ ես պա հե-
ցից ըզ ճա նա պար հըս խիս տըս ։
Հաս տա տեա ըզ շա ւի ղըս իմ՝ ի
ճա նա պար հի .քում. զի մի՛ գայ-
թակ ղես ցին գը նաց.ք իմ.

Ես առ .քեզ տէր կար դա ցի՝ զի
լու ար ի՛նձ աս տու ած. խո նար-
հե ցո առ իս զու ՛ն կըն .քո եւ լու ր
բա նից ի մոց ։

Ըս.քան չե լի ա րա րեր զո ղոր մու-
թիւ նըս .քո. ո՛ր փըր կես զայ նո սիկ
ոյ.ք յու սա ցեալ են ՚ի .քեզ, յայն-
ցանէ՝ որ.ք հա կա ռակ կան ա-
ջոյ .քոյ ։

Պա հեա զիս որ պէս բիբ ա կան.
ընդ հո վա նեաւ թե ւոց .քոց
ծած կես ցես զիս յե րե սաց ամ-
պա րըշ տաց, ոյ.ք տա ռա պե ցու-
ցին զիս ։

Թըշնամիք զանձըն իմ պաշարեցին, եւ 'ի ճարպըս իւրեանց արգելին, եւ բերանք նոցա խօսեցան զամբարտաւանութիւն ։

Մերժեցին զիս՝ եւ այժըմ դարձեալ պատեցան զինեւ . ուշ եդին խոնարհեցուցանել զիս յերկիր ։

Համարեցան ինձ որպէս առիւծ զի պատրաստի յորս . եւ որպէս կորիւն առիւծու զի նըստի դարանեալ ։

Արի՛ տէր ժամանեա նոցա եւ խափանեա ըզնոսա . փըրկեա զանձըն իմ յամպարըշտաց 'ի սըրոյ՝ եւ 'ի ձեռաց թըշնամոյն ։

Տէր կորո ըզնոսա յերկըրէ, բաժանեա եւ խափանեա ըզնոսա 'ի կեանըս իւրեանց ։

Գաղտ նե օք քովք լը ցան ո րո-
վայ նք նո ցա . յա գե ցան կե րակ-
րովք, եւ թո ղին ըզ մը նա ցուա-
ծըս որ դւոց իւ րեանց ։
Ես ար դա րու թեամբ ե րե ւե-
ցայց ե րե սաց քոց . եւ յա գե-
ցայց յե րե ւիլ փա ռաց քոց ։

Սաղմոս ՚ի Դաւիթ ԺԷ.

Սի րե ցից ըզ քեզ, Տէր զօ րու-
թիւն իմ, Տէր հաս տա տիչ իմ՝
ա պա ւէն իմ եւ փըր կիչ իմ ։
Աս տու ած օգ նա կան իմ, եւ ես
յու սամ ՚ի նա . ա պա ւէն իմ,
եղ ջիւր փըր կու թեան իմոյ՝ ըն-
դու նող իմ է ։
Օրհ նե լով կար դա ցից առ Տէր .
եւ ՚ի թըշ նա մեաց իմոց ապ րե-
ցայց ։

Շուրջ ե ղե՛ն զի նեւ եր կունք
մա հու. եւ ու ղխք ա նօ րէ նու-
թեա՛ն խռ ռո վե ցու ցի՛ն զիս։
Վ իշտք դը ժո խոց պա շա րե ցի՛ն
զիս. եւ ժա մա նե ցի՛ն ինձ որո-
գայթք մա հու։

Ի նե ղու թեա՛ն ի մում ես առ
տէր կար դա ցի. եւ առ աս-
տուած իմ ա ղա ղա կե ցի։

Լ ո ւ աւ ինձ 'ի տա ճա րէ սրբոյ
իւր մէ ձայ նի ա ղօ թից ի մոց.
եւ ա ղա ղակ իմ ա ռա ջի նո րա՝
մըտ ցէ յա կա՛ն ջըս նո րա։

Խռ ռո վե ցաւ եւ դո ղաց եր կիր,
եւ հի մու՛նք լե րա՛նց սա սա նե-
ցա՛ն եւ խռ ռո վե ցա՛ն, զի բար-
կա ցաւ 'ի վե րայ նո ցա աս-
տուած։

Ել ծուխ 'ի բար կու թե նէ նո-
րա. եւ հուր յե րե սաց նո րա

բորբոքեցաւ. եւ փայլատա-
կունք հատան 'ի նըմանէ :
Խոնարհեցոյց զերկինըս եւ էջ.
եւ մէգ 'ի ներքոյ ոտից նորա :
Եւ 'ի քըրովբէս եւ թըռուեաւ.
սըլացաւ նա 'ի թեւըս հողմոց:
Եդ ըզխաւար 'ի ծածկոյթ իւր,
եւ շուրջ ըզնովաւ են յարկք
իւր. եւ խաւարային ջուրք մին-
չեւ յամպըս օդոց :

Ի փայլատակել նորա առաջի
նոցա ամպք անցուցին ըզկար-
կուտ եւ ըզկայծակունըս հուր:
Առաքեաց ըզնետըս իւր՝ եւ
ցըրուեաց ըզնոսա. յաճա-
խեաց ըզփայլատակունըս իւր,
եւ խըռովեցոյց ըզնոսա :
Երեւեցան աղբերք ջուրց,
եւ յայտնեցան հիմունք աշ-
խարհի :

ի սաստէ քումմէ, տէր, եւ 'ի շնչէ հողմոյ բարկութեան քո։

Առաքեաց 'ի բարձանց եւ ընկալաւ զիս. ընկալաւ զիս 'ի ջուրց բազմաց։

Փրկեսցէ զիս տէր 'ի թշնամեաց իմոց հզօրաց, եւ յատելեաց իմոց, զի հզօրք եղեն քան զիս։

Ժամանեցին ինձ աւուրք չարչարանաց իմոց. եղեւ տէր հզօրիչ իմ, եւ եհան զիս յանդորր. եւ փրկեսցէ զիս տէր՝ զի կամեցաւ զիս։

Հատուսցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում. ըստ ամբծութեան իմում հատուսցէ ինձ։

Ես պահեցից ըզճանապարհս

տեաւն, եւ ոչ ամ բա րըշ տե-
ցայց յաս տու ծոյ իմ մէ։
Ա մե նայն ի րա ւունք նո րա ա ռա-
ջի իմ են. եւ զար դա րու թիւն
իւր ոչ 'ի բա ցեայ ա րար յի նէն։
Եղէց եւ ես ան բիծ ընդ նը մա.
եւ ըզ գու շա ցայց յա նօ րէ նու-
թե նէ իմ մէ։
Հա տուս ցէ ինձ տէր ըստ ար-
դա րու թեան ի մում, ըստ սըր-
բու թեան ձե ռաց ի մոց ա ռա ջի
ա չաց ի մոց։
Ընդ սըր բոյն սուրբ ե ղի ցիս,
ընդ ա ռըն ան բը ծի ան բիծ ե-
ղի ցիս, ընդ ընտ րե ալ սըն ընտ-
րե ալ ե ղի ցիս, եւ ըզ թիւր սըն
կոր ծա նե սցես։
Դու ըզ ժո ղո վուր դըս խո նար-
հըս կե ցու ցա նես. զա չըս ամ-
բար տա ւա նից դու խո նար հե-

ցուցանես ։

Դու լուսաւոր առնես ըզճը-
րագ իմ, տէր, աստուած իմ
լոյս արա ինձ 'ի խաւարի ։
Քեւ փրկեցայց 'ի փորձութե-
նէ. աստուծով իմով անցից ընդ
պարիսպս ։

Աստուած իմ անբիծ են ճանա-
պարհք քո, եւ բանք տեառն
ընտրեալ են, եւ ապաւէն ա-
մենեցուն՝ որ յուսան 'ի նա ։
Վասն զի ո՞վ է աստուած բաց 'ի
տեառնէ. կամ ո՞վ է աստուած
բաց յաստուծոյ մերմէ ։

Աստուած՝ որ ըզգեցուցեր ինձ
զօրութիւն, եւ եդեր յանբը-
ծութեան ըզճանապարհս իմ։
Հաստատեցեր զոտըս իմ որպէս
զեղջերուի, եւ 'ի վերայ բար-
ձանց կացուցեր զիս ։

Ու սու ցեր ըզ ձե ռըս իմ 'ի պա-
տե րազմ, եւ ա րա րեր ըզ բա-
զուկ իմ որ պէս զա ղե ղըն հաստ.
եւ ե տուր ինձ ըզ պաշտ պա նու-
թիւն փըր կու թեան քո ։
Աջ քո ըն կա լաւ զիս, եւ խը-
րատ քո կանգ նեաց զիս իս պառ,
եւ խը րատ քո ու սու ս ցէ զիս ։
Ըն դար ձա կե ցեր ըզ գը նա ցըս
իմ 'ի ըս տո րէ իմ մէ, եւ ոչ տը-
կա րա ցան շա ւիղ ք իմ ։
Հա լա ծե ցից ըզ թըշ նա միս իմ
եւ հա սից նո ցա. եւ ոչ դար-
ձայց 'ի նո ցա նէ՝ մին չեւ ըս պա-
ռե ցից ըզ նո սա ։
Նե ղե ցից ըզ նո սա եւ այլ մի՛
կա րաս ցեն կեալ. եւ անկ ցին
'ի ներ քոյ ո տից ի մոց ։
Ըզ գե ցու ցեր ինձ զօ րու թիւն
'ի պա տե րազ մի. ըզ յա րու-

ցեալ սըն 'ի վե րայ իմ՝ ներ .քոյ
իմ ա րա րեր :

Ըզ թըշնա միս իմ հա լա ծա կա-
նըս ա րա րեր , եւ զա տե լիս իմ
սա տա կե ցեր :

Ա զա զա կե ցին եւ ոչ ոք էր՝ որ
փըր կէր ըզ՛նո սա . կար դա ցին
առ տէր՝ եւ ոչ լո ւաւ նո ցա :

Մանր ե ցից ըզ՛նո սա որ պէս փո-
շի ա ռա ջի հող մոյ . եւ որ պէս
կաւ գը ռե հաց կո խե ցից ըզ-
նո սա :

Փըր կես ցէ զիս տէր 'ի հա կա-
ռա կու թե նէ ժո ղո վըր դե ան ,
եւ կա ցուս ցէ զիս գը լուխ հե-
թա նո սաց :

Ժո ղո վուրդ՝ զոր ոչ գի տէի՝ ծա-
ռա յե աց ինձ , եւ 'ի լուր ա կան-
ջաց լո ւաւ ինձ :

Որ դիք օ տա րաց սը տե ցին ինձ .

որդիք օտարաց մաշեցան եւ
կաղացին 'ի շաւղաց իւրեանց։
Կենդանի է Տէր եւ օրհնեալ է-
աստուած. բարձր եղիցի աս-
տուած փրկութեան իմոյ։
Աստուած է՝ որ խնդրէ ըզվը-
րէժ իմ, եւ հընազանդ առնէ
ըզժողովուրդըս ընդ ինեւ։
Փրկիչ իմ 'ի թըշնամեաց իմոց
բարկացողաց. յայնցանէ, որ յա-
րուցեալ են 'ի վերայ իմ՝ բար-
ձըր արարեր զիս, եւ յառնէ-
անիրաւէ փրկեցեր զիս։
Վասն այսորիկ խոստովան ե-
ղէց քեզ 'ի հեթանոսըս, եւ ա-
նուան քում սաղմոս ասա-
ցից։
Մեծ արարեր ըզփրկութիւն
թագաւորի նորա՝ առնել ո-
ղորմութիւն ընդ օծելոյ նո-

րա, ընդ դաւթի եւ ընդ զա-
ւակի նորա ազգէ մինչեւ յազգ:

Օրհնութիւն Մովսէսի եւ որդւոյն Իսրայէլի:

Օրհնեսցուք զտէր, զի փա-
ռօք է փառաւորեալ:
Զհեծեալս եւ զերիվարս
ընկէց 'ի ծով. օգնական ընդու-
նելի իմ տէր, եւ եղեւ ինձ 'ի
փրկութիւն:
Այս է իմ աստուած եւ փառա-
ւոր առնեմ զնա, աստուած
հօր իմոյ՝ եւ բարձր արարից
զնա:
Տէր խորտակէ զպատերազ-
մունս, տէր է անուն նորա:
Զընտիրս արանց եւ զընտիրս
զսպառազինաց, զկառս եւ

զե րի վա րըս եւ զա մե նայն զօ-
րու Թիւն փա րա ւո նի ըն կեց 'ի
ծով։

Ծով ծած կե աց ըզ նո սա. ըն կլան
յան դուն դըս խո րոց ի բրեւ ըզ-
վէ մըս ։

Աջ.քո, տէր, փա ռա ւո րեալ է
զօ րու Թեամբ իւ րով. աջ.քո,
տէր, խոր տա կե աց ըզ Թըշ նա-
միս.քո ։

Եւ մե ծու Թեամբ փա ռաց.քոց
ման րե ցեր ըզ հա կա ռա կոր դըս
.քո. ա ռա.քե ցեր ըզ բար կու-
Թիւն սըր տը մը տու Թեան.քոյ,
եւ ե կեր ըզ նո սա որ պէս զե-
ղե գըն ։

Հող ւով զօ րու Թեան սըր տը մը-
տու Թեան.քո պա տա ռե ցան
Ջուրք. դի զան կա ցին որ պէս
պա րիսպ.քա րեայ Ջուրք ծո վուն

Եւ պաղեցան գիզան ալիք ջուր-
ցըն 'ի մէջ ծովուն:
Ասաց Թըշնամին, ասէ, հալա-
ծեցից հասից, հարից, բաժա-
նեցից զաւարըն եւ լըցուցից
'ի նոցանէ զանձըն իմ.
Ի սուր իմ որ կից ընդ նոսա. ու-
րեսցէ եւ բարձրասցի 'ի վերայ
նոցա աջ իմ:
Առաքեցեր ընդ հողմըն քո եւ
ծածկեաց ընդ նոսա ծով. ընկըղ-
մեցան եւ իջին որպէս կապար
'ի ջուրըս սաստիկըս:
Ո՞ նըմանի քեզ յաստուածըս,
տէր. կամ ո՞վ նըմանիցի քեզ՝
փառաւորեալըդ 'ի սուրբըս:
Ըսքանչելի փառաւորեալ՝ որ
առնես ընդ նըշանըս եւ զարուես-
տըս. ձըգեցեր ընդ ձեռըն քո,
եւ եկուլ ընդ նոսա երկիր:

Ա ռաջ նոր դե ցեր ար դա րու-
թեամբ ժո ղո վըր դեան քո, այ-
սօր, զոր եւ փըր կե ցեր :

Եւ մի խի թա րե ցեր զօ րու-
թեամբ քով 'ի բա նա կե տեղ
սըր բու թեան քո. լու ան ազ գըք
եւ բար կա ցան, եւ եր կունք
կա լան ըզ բը նա կի չըս փը ղըշ-
տա ցւոց :

Յայն ժամ փու թա ցան դա տա-
ւորք Ե դով մայ, եւ իշ խանք
մո վա բա ցւոց :

Կա լաւ զը նո սա դո ղու մըն, հա-
լե ցան ա մե նայն բը նա կիչք քա-
նա նա ցւոց :

Ան կցի 'ի վե րայ նո ցա ահ եւ
եր կիւղ, եւ 'ի զօ րու թե նէ
բազ կի քո քա րա ցին :

Մին չեւ անց ցէ ժո ղո վուրդ քո,
տէր, մին չեւ անց ցէ ժո ղո վուրդ

քո, այս, զոր ըստացար ։
Տարեալ տընկեսցես ըղնոսա 'ի
լերին ժառանգութեան քո, 'ի
պատրաստութիւն բընակու-
թեան ժառանգութեան քոյ ։
Զոր ըստացար 'ի ըսկըզբանէ
տէր, ըստացար սըրբութեամբ՝
զոր պատրաստեցին ձեռք քո.
տէր թագաւոր յաւիտեանըս
յաւիտենից եւ եւըս ։
Զի եմուտ փարաւոն կառօք եւ
երիվարօք եւ ընտիր ըսպառա-
զինօք 'ի մէջ ծովուն ։
Եւ ած 'ի վերայ նոցա տէր ըզ-
ջուրըս ծովուն. եւ որդիքըն
իսրայէլի գընացին ընդ ցամաք
'ի մէջ ծովուն ։
Փառք հօր և որդ. Այժմ և.

## Մաղթանք.

Քրիստոս է իմ Աստուած, և փառաւոր առնեմ զնա. Աստուած հօր իմոյ, և բարձր արարից զնա: Մարդասէր տէր, վասն Արքուհւոյ անարատի Մօր քոյ և կուսի, և վասն Խաչի քոյ պատուականի, ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ:

## Քարոզ.

Վասն 'ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց՝ զտէր աղաչեսցուք:

Վասն լսելի լինելոյ առաջի Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ զտէր աղաչեսցուք:

Վասն քաւիչ և 'ներող լինելոյ Աստուծոյ 'ի վերայ մեղաց մերոց՝ զտէր աղաչեսցուք:

Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր զկամայ և զակամայ՝ զտէր աղաչեսցուք:

Վասն զի մի ընդ խոտանս գտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան՝ զտէր աղաչեսցուք:

Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով 'ի Քրիստոս ննջեցին, ըզտէր աղաչեսցուք:

Եւ եւս միաբան՝ վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ՝ զտէր աղաչեսցուք։ Զանձինս մեր՝ և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։ Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր ողորմեա։

## ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ

Հաւատամք 'ի մի Աստուած 'ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց և աներեւութից. և 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յէութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ՝ լոյս 'ի լուսոյ՝ Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր որով ամենայն ինչ եղեւ յերկինս և 'ի վերայ երկրի, երեւելիք և աներեւոյթք։ Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարի-

ամոյ Որդոյ կուսէն Հոգւոյն Որդով։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ. և զամենայն՝ որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, Թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ Թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և 'ի Սուրբ Հոգին յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յԱւետարանս. որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ 'ի սուրբսն։

Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և առաքելական Սուրբ Եկեղեցի, 'ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն, և 'ի Թողութիւն մեղաց, 'ի յարութիւն մեռելոց, 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց յարքայութիւնն երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասենն՝ էր երբեմն՝ յորժամ ո՛չ էր Որդի, կամ էր երբեմն յորժամ ո՛չ էր Սուրբ Հոգին, կամ Թէ յոչընչից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և

*կամ՛ զՍուրբ Հոգին . և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք , զայնպիսին նզովէ Կաթուղիկէ և Առաքելական Սուրբ Եկեղեցի :*

Ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ ասացեալ:

*Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ . այժմ եւ միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :*

---

## Աղօթք Տէրունական:

*Հայր մեր , որ յերկինս ես՝ սուրբ եղիցի անուն քո . եկեսցէ արքայութիւն քո . եղիցին կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի : Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր . եւ թող մեզ զպարտիս մեր , որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց : Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն , այլ փրկեա 'ի չարէ : Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն :*

ՏՊԱՐԱՆ № 2